ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն Տ. ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արթուր Աղաբեկյանի, Վահան Հովհաննիսյանի, Հրայր Կարապետյանի և Միքայել Մանուկյանի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Թիկնազորային (պահնորդական) գործունեության մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Ի. «Թիկնազորային (պահնորդական) գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Թիկնազորային գործունեությունն էապես տարբերվում է պահնորդական գործունեությունից և այս պայմաններում դրանց համար մեկ միասնական չափանիշի սահմանումը կարող է ոչ թե նպաստել, այլ խոչընդոտել նշված գործունեության իրականացմանը: Նախագծով, ըստ էության, փորձ է արվում բացի թիկնազորային գործունեությունից կարգավորել նաև այլ իրավահարաբերություններ (հիմնարկներում, կազմակերպություններում անվտանգության ծառայությունների իրականացում, գույքի պահպանություն և տեղափոխում, այլ ծառայությունների իրականացում): Հստակեցման կարիք ունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների համար նման ծառայություններից օգտվելու կարգը, պայմանները և պարտադիր լինելու հարցը:

2. 9-րդ հոդվածի՝

ա. 2-րդ մասի «դ» և «ե» ենթակետերն անընդունելի են, քանի որ՝

1) անվտանգության և հրդեհային ազդանշանային միջոցների ու համակարգերի նախագծումը, տեղադրումը և շահագործման աշխատանքների իրագործումը պահանջում է հատուկ գիտելիքներ ու հմտություններ և այդ գիտելիքներին ու հմտություններին տիրապետող

և համապատասխան թույլտվություն ունեցող բոլոր անձինք կարող են զբաղվել նման գործունեությամբ,

2) մտավոր սեփականության պաշտպանության հարցը կարգավորված է օրենքով և նման գործունեությամբ զբաղվելու համար թիկնապահներից պետք է պահանջվի հատուկ գիտելիքների առկայություն,

բ. 3-րդ մասում «կարող են ունենալ» և «որի նմուշները համաձայնեցվում է լիազոր մարմնի հետ» բառերն առաջարկում ենք փոխարինել համապատասխանաբար «միայն աշխատանքային ժամերին պետք է կրեն» և «որոնք պետք է տարբերվեն պետական մարմինների աշխատողների համազգեստներից» բառերով:

3. Օրենքի նախագծի 12-րդ հոդվածը հակասում է նախագծի 3-րդ հոդվածին: Թիկնապահը չի կարող և չպետք է մատուցի 9-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ծառայության բոլոր տեսակները: Թիկնապահի գործունեության շրջանակը շատ ավելի նեղ է:

4. 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում նշված տեխնիկական միջոցների կիրառումը սահմանափակող նորմը չի գործի Հայաստանի Հանրապետությունում արգելք սահմանող օրենքների և իրավական ակտերի բացակայության պատճառով:

5. 21-րդ հոդվածի՝

ա. 1-ին մասի 1-ին պաբերությունում «լիցենզիա» բառը փոխարինել «իրավունք» բառով, իսկ 2-րդ պարբերությունը անհրաժեշտ է հանել, քանի որ դրանով նախատեսված հարցերը սույն օրենքի նախագծի կարգավորման առարկա չեն հանդիսանում,

բ. 2-րդ մասով նախատեսվում է նաև թիկնազորային կազմակերպության ղեկավարների որակավորում, ինչը համարում ենք անընդունելի, քանի որ այն կխոչնդոտի ազատ տնտեսվարմանը՝ թիկնազորային կազմակերպության ղեկավարները չլինելով որակավորված կարող են կազմակերպել և ղեկավարել համապատասխան կազմակերպության գործունեությունը: Առաջարկում ենք նշված մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Թիկնապահների որակավորման ստուգման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Թիկնապահներին որակավորում տրամադրվում է 5 տարի ժամկետով:»:

6. 24-րդ հոդվածով թիկնազորային գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ նորմը սահմանափակվում է հռչակագրային բնույթի դրույթներով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 3-րդ կետի՝ իրավաբանական անձանց, ձեռնակատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը պետք է սահմանվեն օրենքով, տվյալ պարագայում՝ նա-

խագծում բացակայում են վերահսկողության ընթացակարգերը: Այս հանգամանքն անարդյունավետ է դարձնում ոլորտի իրավական կարգավորումը:

7. Նախագծի 25-րդ հոդվածը խմբագրման կարիք ունի: Անհրաժեշտ է հստակ սահմանել իրավախախտման դեպքերը և, ելնելով տվյալ բնագավառի առանձնահատկություններից, յուրաքանչյուրի համար նախատեսել կոնկրետ պատասխանատվության միջոց:

8. Նախագծով նախատեսվում է ընդլայնել զենք կրելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչը հակասում է «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տրամաբանությանը: Նախագիծը, ըստ էության, հրազենի շրջանառության նոր բնագավառ բացելուն զուգահեռ չի նախատեսում թիկնազորային գործունեության նկատմամբ հսկողության իրավական մեխանիզմներ:

9. Թիկնազորային գործունեության հետ կապված օրենսդրական դաշտը կարգավորված է «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Թիկնազորային գործունեության նպատակները, որոնք ամրագրված են նախագծի 6-րդ հոդվածում, որպես պետական գործառույթներ, արդեն իսկ ամրագրված են «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 10-րդ և 15-րդ հոդվածներում:

Հարկ է նշել, որ ԱՊՀ անդամ պետությունների (ՌԴ, Ուկրաինա և այլն) փորձը ցույց է տվել, որ թիկնազորային կազմակերպությունները չեն ծառայում իրենց բուն նպատակին, ներքաշվում են տնտեսական և քրեական բախումների ոլորտ, ինչը զգալիորեն ազդում է քրեածին իրավիճակի բարդացման վրա:

II. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծի 2-րդ հոդվածը չի բխում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն «նոր գործունեությունը լիցենզավորված կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը հրապարակվելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո»:

III. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նշված օրենքի նախագծի անհրաժեշտությունը չկա, քանի որ դրանով նախատեսված հարաբերությունները արդեն իսկ կարգավորված են Վարչական իրավախախտումների վերա-

բերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169-րդ հոդվածով: Մասնավորապես, հիշյալ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում առանց լիցենզիայի պետական լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար:

VI. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նշված օրենքի նախագծում նոր հոդված նախատեսելու անհրաժեշտություն չկա, և լրացումը պետք է նախատեսվի «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «Գործունեության այլ բնագավառներ» բաժնում: Առաջարկում ենք սահմանել տարեկան պետական տուրք:

Ելնելով վերը նշվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը աննպատակահարմար է համարում ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի առաջին տեղակալ Ա. Մահտեսյանը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ